ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 178

*20 մայիս 2019թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Ջիվան Գյուլամիրյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքում ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, տրված 2006 թվականի օգոստոսի 1-ին Ջիվան Գյուլամիրյանին և Սուսաննա Միքայելյանին պատկանող 0,04762 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց թիվ 22/1:
2. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքում Խաչատուր Կեչառեցու փողոց թիվ 22/1 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված 548,48 ք.մ. արտաքին մակերեսով շինությունները:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը նրանց օրինականացման համար վճար չի գանձվում:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 179

*20 մայիս 2019թ.*

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով `

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. <<Նյու Հորիզոն գրուպ. ԻՆԿ>> ընկերության Հայաստանյան մասնաճյուղին /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, ԳՄՀ, Օլիմպիական փողոց, թիվ 18 / տրամադրել՝

1) 2019 թվականի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 1233.5 քմ տարածքում,

2) 2019 թվականի ընթացքում ոգելից խմիչքի՝1233.5քմ տարածքում և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն 124.8 քմ տարածքում ,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 180**

*21 մայիս 2019թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Լուդմիրա Հովհաննեսի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող, մարզ Կոտայքի , համայնք Ծաղկաձոր ք. Վ.Հարությունյան փողոց թիվ 11/3 հասցեում գտնվող 0,025 հա մակերեսով հողամասի, մարզ Կոտայքի , համայնք Ծաղկաձոր ք. Վ.Հարությունյան փողոց թիվ 11/5 հասցեում գտնվող 0,0081 հա մակերեսով հողամասի և մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ք. Վ.Հարությունյան փողոց թիվ 11/56 հասցեում գտնվող 0.0171 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0,0502 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ք. Վ.Հարությունյան փողոց թիվ 11/3:

**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐԻ ... *03001885*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 181

*21 մայիս 2019թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 17-ի <<<<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի ծախսերի և եկամուտների նախահաշիվները հաստատելու մասին>> թիվ 11 որոշման թիվ 1 և թիվ 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 182

*23 մայիս 2019թ.*

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Արթուր Գալստյանին/գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր,Գրիգոր Մագիստրոսի փողոց,թիվ 22 / տրամադրել՝

1) 2019 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 50քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 183

*23 մայիս 2019թ.*

## ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 84-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2019 թվականի հունիսի 12-ին, ժամը 15:00 Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում /քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրներ փողոց, թիվ 9/ կազմակերպել և անցկացնել հանրային բաց լսումներ և քննարկումներ՝ Ծաղկաձոր համայնքի Տանձաղբյուր փողոցում ամառային գծային սահնակների /Տաբազան/ կառուցման քննարկման վերաբերյալ:

2. Հանրային բաց լսումներ և քննարկումներ կազմակերպելու և իրականացնելու աշխատանքների լիազորությունները վերապահել քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 184

*27 մայիս 2019թ.*

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Սույն թվականի մայիսի 28-ին կազմակերպել Առաջին Հանրապետության օրվան նվիրված միջոցառում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կոտայքի մարզ Ծաղկաձորի համայնքապետարան ՀՀ 03001885

**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 185

*31 մայիս 2019թ.*

## ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Սույն թվականի հունիսի 01-ին կազմակերպել երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 186**

*31 մայիս 2019թ.*

ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանին տրամադրել 2018 թվականի չօգտագործված արձակուրդից՝ 10 աշխատանքային օր՝ սույն թվականի հունիսի 03-ից մինչև հունիսի 14-ը ներառյալ:

2. Արթուր Հարությունյանի աշխատանքային պարտականությունները վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Գարիկ Հայրապետյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ